

24 դեկտեմբերի 2010թ.

Ժամը 15⁰⁰

- 1 «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին:
(Լևոն Պարտազճյան)
- 2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի անասնաբուժության զարգացում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
- 3 «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ամանօրյա նվերներ հայ երեխաներին» ծրագրի մասին:
(Վարուժան Սեդրակյան)
- 4 «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Առողջություն երեխաներին» ծրագրի մասին:
(Վարուժան Սեդրակյան)
- 5 Հայկական սեյսմոլոգիական և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագրի մասին:
(Ավետիս Առաքելյան)
- 6 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Գավառ և Լճակի համայնքների երեխաների համար «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում» ծրագրի մասին:
(Հռափկ Սարգսյան)
- 7 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Հռափկ Սարգսյան)
- 8 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայ Առաքելական եկեղեցու գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին:
(Հռափկ Սարգսյան)
- 9 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի հովանավորության» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 10 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)

- 11 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 12 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինանյութի տրամադրում Արագածոտնի մարզի Եղիապարտուշ համայնքի մշակույթի տան տանիքը և Շողակն (Նորաշեն) համայնքի տարական դպրոցը վերանորոգելու համար» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 13 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 14 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովնի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր քնակչությանը» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 15 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 16 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Տավուշի տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 17 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 18 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 19 «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում» ծրագրի մասին:
(Գուրգեն Բոշյան)
- 20 «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին:
(Տիգրան Քոչարյան)

- 21 «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին:
(Շողեր Դանիելյան)
- 22 «Կամրջակ» սոցիալ-բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի ավտոմեքենայի նվիրաբերություն և բեռի ներմուծում» ծրագրի մասին:
(Բեկյամին Աղամալյան)
- 23 «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին:
(Մարի Լու Փափազյան)

24. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Ա. Բարխուդարյան)

- 24.1 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 24.2 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված շտապ օգնության ավտոմեքենաների ներմուծման ծրագրի մասին:
- 24.3 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին(N 1):
- 24.4 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին(N 2):
- 24.5 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին(N 3):
- 24.6 «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին(N 4):
- 24.7 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 24.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):
- 24.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի Հանրապետության տուրերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):
- 24.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-688-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություն կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպություն):

25. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Ա. Բարխուդարյան)

- 25.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի N Մ-339-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Կորլոզ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):
- 25.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուրերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):
- 25.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 3-ի N Մ-450-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) :
- 25.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան») :

26. Այլ հարցեր

- 26.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 19-ի N Մ-236-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):
- 26.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-620-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):
- 26.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի N Մ-524-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):
- 26.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-771-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»):

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

դեկտեմբերի 2010 թվականի N Մ -
քաղ. երևան

- Ա 18/1

**«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՋԹԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԾՈՒԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆՎԵՐՆԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել, «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վաղարշ Վաղարշյան 12, ՀՎՀՀ՝ 00250922) 2010 թվականներին իրականացվող՝ 212500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպությանը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառա-

վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

«Քրիստոնեական Մշակութային Միջազգային Ծառայություններ» Բարեգործական Հասարակական Կազմակերպության Նախագահ Լ. Պարտազյանի կողմից
 «01» փետրվարի 2010թ.

2011-2012թթ. «Նվերներ» Հայաստանի երեխաներին»
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Եվրոպական տարբեր երկրների երեխաների կողմից տուփերում հավաքված նվերների ստացումը և անհատույց բաշխումը 2-14տարեկան երեխաներին: «Նվերներ Հայաստանի երեխաներին» նվերները ստացվում են տուփերի վրա նշված լինելով աղջիկների և տղաների (2-4, 5-9, 10-14) տարիքը: Տուփերը պարունակում են չօգտագործված գրենական պիտույքներ, փափուկ խաղալիքներ, հիգենիկ պարագաներ, երեխային մտային, ֆիզիկական և ընդհանուր զարգացման համար խաղեր:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել բեռների ստացման և ձևակերպման հետ կապված ծառայությունների մաքսային և հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	Բարեգործներն են՝ «Մամարացու Գանձանակ» միջազգային բարեգործական կազմակերպության Անգլիայի (հասցե՝ Վիկտորիա Հաուզ, Վիկտորիա Ռոուդ, Բուրհարթս Հիլ, Էստեթ ԻԳ9 5ԵX) և Գերմանիայի (հասցե՝ Գեսլենկե Դեր Հոֆմանգի Ի.Վ; Հայնաուր Ստրաս 72Ա; 12249 Բեռլին, Գերմանիա) կենտրոնները, և «Թիմ Հօփ» Իռլանդիայի կազմակերպությունը (հասցե՝ Լեոպարդսթրուն Բիզնես Կենտրոն, Բալյոզան Ալֆենյու, Դուբլին 18, Իռլանդիա):
4.	Ծրագրի կատարողը	«Քրիստոնեական Մշակութային Միջազգային Ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպություն (ՔՄՄԾ ԲՀԿ): Հասցեն՝ Վ. Վաղարշյան 12, ՀՎՀՀ 00250922
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ բոլոր մարզերի քաղաքների և համայնքների դպրոցների, մանկապարտեզների, առողջապահական հիմնարկների, սոցիալական ապահովության, մշակութային, կրթական և սպորտային հաստատությունների, հասարակական բարեգործական կազմակերպությունների 2-14տարեկան երեխաներ են, որոնց նվերները բաշխվում են կազմակերպությունների կողմից՝ ՔՄՄԾ ԲՀԿ-ին ներկայացված դիմում-հայտերին կցված ցուցակների հիման վրա, որտեղ նշվում է երեխաների անուն, ազգանունը և տարիքը: «Նվերներ» Հայաստանի երեխաներին» նվերների բաշխումը կատարվում է ՔՄՄԾ ԲՀԿ ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ: Ծրագրի բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի մոտավոր քանակը՝ 2010-2011թթ. համար 250.000 տուփ, մոտավորապես՝ 212.500.000 ՀՀ դրամ, որը համարժեք է 590.277 ԱՄՆ դոլարի: «Նվերներ» Հայաստանի երեխաներին» նվերները ստացվում են անվճար, ուղարկողներ են վճարում ճանապարհածախսերը՝ մինչև Վ. Վաղարշյան 12 հասցեն: Կազմակերպության կողմից ծրագրով ծախսեր չեն մախատեսվում: Առաքողներն են որոշում չափերը, ժամկետները և հայտնում կազմակերպությանը:

7.	Բարեգործություն ստացողը	Նախապես անհայտ են բարեգործություն ստացողները: «Նվերներ» Հայաստանի երեխաներին» նվերները ստանում են հայտեր ներկայացնող կազմակերպությունները՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Բաշխումը կատարվում է ըստ ստացված դիմում-հայտերի և երեխաների թվաքանակին համապատասխան: Կատարված աշխատանքների վերաբերյալ հետագայում տրվում են հաշվետվություններ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2011թ. հունվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը: 2011թ. հունվարին սպասվում է բեռների ստացում, որոնց ձևակերպումը և բաշխումը՝ համաձայն ծրագրի, կկատարվի 2011թ. հունվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրու-թյունը և ժամկետները, անհրա-ժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում փուլեր չեն մախատեսվում, ժամկետները և կատարման համար պահանջվող ֆինանսական միջոցները տրամադրվում են բարեգործների կողմից:
10.	Չեղբ բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատես-վող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստացվելիք բարեգործության մոտավոր քանակ: 2010-2011թթ.-ին՝ 100.000տուփ, 85.000.000 ՀՀ դրամ, որը համարժեք է 236.111 ԱՄՆ դոլարի և 2012թ.-ին՝ 150.000տուփ, 127.500.000ՀՀ դրամ, որը համարժեք է 354.166 ԱՄՆ դոլարի: Վերջնական քանակները և արժեքները հանձնաժողովին կներկայացվի գույքընթաց բեռները ստանալուց հետո: (Անկեղծվում է ներմուծված բեռների մաքսային արժեքների ԱԱՀ-ի վճարումից ազատում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն ներկայացվում:
12.	Համագործակցությունը պետա-կան կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին-ների, այլ կազմակերպություն-ների հետ	Նախատեսվում է համագործակցել ՀՀ Կրթության և Գիտության նախարարության, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ Մշակույթի նախարարության, ՀՀ մարզպետարանների (Արմավիրի, Ծիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի, Արագածոտնի, Սյունիքի, Վայոց Ձորի) տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրու-թյունը	Ծրագիրը իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ, վերահսկվում է «Քրիստոնեական Մշակութային Միջազգային Ծառայություններ» Բարեգործական Ընկերության տարբեր երկրների կազմակերպությունների ներկայացուցիչների և ՀՀԿԲԾՀՀ-ի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացնի ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տեղեկատվություն:

ՔՄՄԾ ԲՀԿ Նախագահ

Լ. Պարտազյան

18/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

18/1

0010, Երևան, Մեկից-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.12.2010 № 3/3.8 Ձ/0044-10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 06.12.2010թ. N15/15.2/15492-10 գրությամբ ներկայացված «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի վերնագրում նշված ծրագիրը իրականացնողի անվանումը համապատասխանեցնել որոշման բովանդակության մեջ նշված բարեգործական հասարակական կազմակերպության անվանմանը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 2011-2012թթ. ընկած ժամանակահատվածի համար, ուստի առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետի «2010 թվականներին» և ծրագրի 6-րդ կետում նշված «2010-2011թթ.» տարեթվերը փոփոխել՝ համապատասխանեցնելով այն ծրագրի իրականացման իրական ժամկետներին (2011-2012թթ.):

Հարգանքով՝

Ա. Զանցուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/29202-10



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ ՈՒ Թ Յ Ա Ն Լ Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն
Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

18/1

375010, ք. Երևան, Հալաբյան 41/Ա

« 14 » « 12 » 2010թ. N 4970-10

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
Պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Ի կապարումն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի
6-ի 15/15.2/15492-10 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «2011-2012թթ. «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի վերաբերյալ հայտնում ենք, որ դեմ ենք ներկայացված ծրագիրը բարեգործական որակելուն, քանի որ

1. Ծրագրի 7-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել բարեգործություն ստացողներին:

2. Ծրագրի 9-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն ծրագրում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ ծրագրի իրականացման փուլերի մասին:

3. Ծրագրի 10-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե ինչ գույք է ձեռք բերվելու, ինչպես նաև դրույթներ նախատեսել ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ նկատի ունենալով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջները:

Հարգանքով՝

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն

035/29537-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

18/1

«14» 12 2010 թ.

N 90/Ապրիլ 17 - 1/6084-10

Ձեռ 08-12-2010թ.
N 15/15.2/15492-10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Մինոնյանին

Հարգելի պարոն Տեր-Մինոնյան

Քննարկելով «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ հայաստանյան միջեկեղեցիական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ ծրագիրը բարեգործական որակելու կապակցությամբ առաջարկություն և դիտողություն չունեն:

Հարգանքներով

Ս. Քերիկյան

020/29670-10

Կատարող՝ Բարեգործական ծրագրերի
համակարգման բաժին
հեռ. 525-893



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

18/1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

10.12.2010 N 22/22/9283-10

Ձեռ N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՄԻՆՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Մինոնյան

Ձեռ 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրության կապակցությամբ՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ հայաստանյան միջեկեղեցիական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա. Միրզոյան
հեռախոս 52 27 21

020/29172-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

18/1

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 52 66 02, ֆաքս/ֆակս/факс (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/12663-10 "07 12" -----2010

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 06.12.2010թ. N 15/15.2/15492-10 գրության, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Նվերներ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄԿՐՏՅԱՆ

Կադր.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

03/28854-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 18/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

13.12.2010 թ.

044/3-4/3069-10

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրությանը կից ներկայացված «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից 2011-2012 թվականներին իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

1. ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները հայտարարագրվում և մաքսային ձևակերպում են ստանում ըստ ԱՊՀ երկրների Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ): Վերջինիս միջոցով ապրանքների դասակարգման գործընթացը կանոնակարգվում է ԱՏԳ ԱԱ-ի մեկնաբանման հիմնական կանոններով և առանձին ապրանքային խմբերի ու դիրքերի պարզաբանումներով: Այդ կանոններով, մասնավորապես, նախատեսված է, որ խառնուրդներն ու բազմատարր ապրանքները պետք է դասակարգվեն խառնուրդի կամ բազմատարր ապրանքի հիմնական բաղադրիչի ծածկագրի ներքո, եթե հնարավոր է որոշել, թե որն է հիմնական բաղադրիչը:

Տվյալ դեպքում, պայմանականորեն «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» անվանվող իրերի լրակազմի բաղադրիչներից որևէ մեկը չի կարող դիտարկվել որպես լրակազմի հիմնական բաղադրիչ, մանավանդ, որ տուփերի պարունակությունը կարող է տարբեր լինել: Հետևաբար, անհնարին է դառնում

044/29487-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան 15, Արգիշտիի փողոց №1

18/1

№ 02/34-25106 հ

«16» 12 2010 թ.

Ձեր _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.12.10թ. հ. 15/15.2/15492-10 գրության՝
տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ»
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից
իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ գիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով՝

Կ. Արեճյան
ՅԲԶ

Կ. ԱՐԵՅԱՆ

Կառ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
Մարզ. կենտրոն
100/30234
20 12 2010

ներմուծվող բեռների հայտարարագրման և մաքսային ձևակերպումների հետագա
գործընթացը:

18/1

Միաժամանակ՝ վերոնշյալ հստակեցման բացակայությունը բավարար
հիմքեր չի տալիս եզրակացնելու, որ ներմուծվող բեռները անվտանգ են և
շահառուների առողջության համար վնասակար չեն:

2. Անընդունելի է բեռի բաշխման և շահառուների վերաբերյալ
կազմակերպության կողմից ներկայացված տեղեկատվությունը, քանի որ ըստ
ծրագրի 7-րդ կետի՝ բարեգործություն ստացողները նախապես անհայտ են:
Վերջինս հակասում է ՀՀ-ում բարեգործության ոլորտը կարգավորող
օրենսդրությանը:

3. Ծրագրի 8-րդ և 10-րդ կետերի միջև առկա է հակասություն: Ծրագրի 10-րդ
կետում բեռների ներմուծում է նախատեսված նաև 2010 թ.-ին, այն դեպքում, երբ 8-
րդ կետի համաձայն ծրագրի սկիզբ է համարվում 2011 թվականի հունվարի 1-ը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ներկայացված ծրագրի բարեգործական
որակմանը դեմ է:

Ա. Ալավերդյան

Ա. Ալավերդյան

Կառարող՝ Անտոնյանի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ. 594652



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ. 36
հեռ. /0264/2-34-31

N. 01/15/3197 - 10

«10» 12 2010թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Պ-ՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեք՝ 2010-12-06 թիվ 15/15.2/15492-10/

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում քննարկվել է «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության /ԲՄՄԾ ԲՀԿ/ կողմից իրականացվող 2011-2012թթ. ընթացքում «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին», նվերների բաշխման ծրագրի մասին որոշման նախագիծը և այն հավանության չի արժանացել:

Հարգանքով՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

2301 ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/Ֆաքս (+374 223) 2 37 13 E-mail marzpetaran@Kotayk.region.am

9.12.2010 N 01/14.2/2835 - 10

Ձեք _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին հաղցեագրած 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրության, մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը՝ «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագիրը բարեգործական որակելու մասին:

Կ.ՃԱՀԳԱԼԴՅԱՆ

Կատարող՝ Վ. Հունանյան
/0223/ 2-67-85

Վ. Մնացականյան
0-264-2-38-75

113/29267-10

115/29053-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

0201 ք. Աշտարակ, Հանրապետության 4, Հեռ./ֆաքս (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 г. Аштарак, Аштаракская 4, Тел /факс (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am
0201 с. Asharak, Hanrapetutyun 4, Tel /Fax (+374 232) 3 22 51 E-mail marzpetaran@Aragatsotn.region.am

07.12.2010 N 01/08/3356-10

Հայաստանի Հանրապետության Կառավարության
Բարեգործական Ծրագրերի Համակարգման
Հանձնաժողովի Նախագահ Պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր՝ 06.12.2010թ. 15/15.2/15492-10 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրը առաջարկում ենք որակել բարեգործական:



Ա.ԱՂԱՎԿՅԱՆ

110/28826-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

18/1

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 07 >> 12 2010թ.

N 01/06/3209-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

<<Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Նվերներ՝ Հայաստանի երեխաներին>> որոշման նախագիծը քննարկվել է Արմավիրի մարզպետարանում և հավանության է արժանացել:

Ձեռք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ԱՂԱՎԿՅԱՆ

Կատ'Լ.Մուրադյան
Ծ.Գրիգորյան

112/28830-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

18/1

3301 ք. Կապան, Գ. Աժդևի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-խոսքի՝ syunik@mta.gov.am


« 07 » 12 2010թ. № 01/3918-10

Ձևը № _____

«Վ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Վ Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը: Դիտողություններ և առարկություններ չունենք:

 Ս. ԲԱԳԴՅԱՆ

Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
Հեռ. /0285/ 2-35-10

117/28845-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

18/1

ք. Եղեգնաձոր, Եսեռույան - 9

« 15 » 12 2010թ.


Հեռ. /374010/ 287401, 2 25 22
N 01/05.1/4517-10 ֆաքս /374010/ 28 18 32

«Վ կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Դ. ՍԱԲԳՍՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Սարգսյան

Ի պատասխան Ձեր 06.12.2010թ. N 15/15.2/15492-10 գրության՝ հայտնում ենք, որ հավանություն ենք տալիս Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ Հայաստանի երեխաներին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծին:

Հարգանքներով՝

 Ս. ԲԱԳԴՅԱՆ

Կատարող՝ Ա. Գաբրիելյան
հեռ. 2-25-51

118/29681-10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

18/1

Ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

4-61-92
Fax 2-28-77

թիվ 102.1/104.3/3976-10

« 10 » 12 2010 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 06.12.2010թ. թիվ 15/15.2/15492-10 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011թ. չնթացքում իրականացվելիք «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

A. Մանուկ Ա.ՂԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР
REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, ՔԱ, ք. Իձձեճան Сагманадрутян 1, ՔԱ, Իջևան Sahmanadrutyanyan 1
հեռ.տեղ.փոն. /0263/ 4-00-45, 3-23-56 ֆաքս /ֆакс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.region.am

13.12.10թ.

01/13.3/3676-10

18/1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.12.2010թ. N 15/15.2/15492-10 գրության հայտնում եմ, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» որոշման նախագիծը քննարկվել է մարզպետարանում և արժանացել հավանության: Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս. Պարսյան

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

կառ. Ա.Փաշինյան
հեռ. /0263/3-22-45



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ 18/1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2010 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան 18/2

« 10 » 12 2010թ.
N: 01/4938-10

ք. Գյումրի, Գ. Նոյնի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ »

Ձեր՝ 06.12.2010թ.
թիվ՝ 15/15.2/15492-10

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

« Հ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ»
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող
«Նվերներ՝ Հայաստանի երեխաներին» որոշման նախագիծը:

Ձեռք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՆԱՍՆԱՐՈՒԹՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/10, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի դեկտեմբերի -ի
N -10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամոսների կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի -ի N ԱԱ/3-4/ և Հայաստանի
Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի -ի N 01/10.1-1/10
եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող՝ 49524500 դրամ ընդհանուր արժողությամբ «Տավուշի մարզի
անասնաբուծության զարգացում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝
«ԲԱՐԴ ԱզրոՍերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2010 թվականի հունիսի 17-ին
կնքված N ԿԼ-0610 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված
աշխատանքների աշխատանքների իրականացում՝ 3624500 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:
3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո
մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
ամփոփ տեղեկատվություն:
4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամտների
կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արմինա Դարբինյան



«06» անվտուգների 2010թ.

« ՀՀ Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում »
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Զարգացնել Տավուշի մարզում անասնաբուծությունը: Ապահովել անվճար հիմունքներով 11 շահառու գյուղերից հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված 50 գյուղացիներին շվեյցարական Ֆլեզվի ցեղի էգ մատղաշ կովերով /համապատասխան հաշվետվությունը կցվում է/:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, գյուղատնտեսության բնագավառ (անասնաբուծություն)
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 49.524.500,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	Տավուշի մարզի գյուղացիները
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ հունիսի 17 - ից մինչև 2011թ. դեկտեմբերի 30-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շվեյցարական կովերի գնում և ներմուծում՝ 45.900.000,00 ՀՀ դրամ: Արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում՝ 500.000,00 ՀՀ դրամ: Կենդանիների խնամքի ուսուցում և մոնիտորինգ՝ 1.000.000,00 ՀՀ դրամ: Հանձնակատարի միջնորդավճար՝ 2.124.500,00 ՀՀ դրամ:
9.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շվեյցարական Ֆլեզվի ցեղի էգ մատղաշ 12-14 ամսեկան կովերի գնում և ներմուծում՝ 45.900.000,00 ՀՀ դրամ (Հարկային և մակսային արտոնություններ չենք ակնկալում): «ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի կողմից՝ Արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում՝ 500.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, Կենդանիների խնամքի ուսուցում և մոնիտորինգ՝ 1.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: «ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի ծառայությունների համար միջնորդավճար՝ 2.124.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակամ՝

Արմինա Դարբինյանը

18/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ՓԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

18/2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.12.10 № 3/38-վ/10060-10

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.12.10թ. N 15/15.1/15674-10 գրության՝ «Հայաստան»
համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի
անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում
ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Զանցուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան հեռ. 595-229

024/29281-10



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն
Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

18/2

375010, ք. Երևան, Հալաբյան 41/Ա

«14» «12» 2010թ. N 4974-10

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
Պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի
8-ի 15/15.1/15674-10 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից
իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում» ծրագրի
վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. ՄԱԽԽԱՅԱՆ

024/29540-10

Կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
հեռ. 380.227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ 18/2

0010, Երևան-10, Հանրապետության իրապարակ,
Կառավարական ստուն, 3

Հեռ./Ֆաքս (374 10) 524-641
Էլ. փոստ. agro@minagro.am

ՔԼԵ/10.2/5705-10

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող
«Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին» «
Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չկան:

Հարգանքով՝

Գ. Ալավերդյան

032/29341-10

Կար՝ Տ. Ալեքսանյան
Հեռ. 529333



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 18/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԼԵԿ/3-Վ/3036-10
10.12.10

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.12.2010թ. թիվ 15/15.1/15674-10 գրությամբ կից ներկայացված
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի
մարզի անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին» որոշման նախագիծը
բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված «ԲԱՐԴ ԱգրոՍերվիս» ՍՊԸ-ի հետ
կնքված պայմանագիրը՝ առաջարկում եմ խմբագրել որոշման նախագծի 2-րդ կետի
2-րդ պարբերությունը՝ ուղղելով պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին,
համարը, գործարքի նկարագրությունը և արժեքը:

Ա. Ալավերդյան

044/29259-10

Կատարող՝ Անտոնյանի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652



18/2

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, РА, Іjevan Sahmanadrutyān 1
hтn.tel.phon. +/374 263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /факс, fax / +/374 263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB <http://tavush.region.am>

01/06/3668-10

13.12.10 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.12.2010թ. թիվ 15/15.1/15674-10 գրության՝ հայտնում եմ, որ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի
անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է
մարզպետարանում և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

Կար.՝ Լ. Մարգարյան
/0263/3-22-15

119/29400-10

ՏԵՂԵԿԱԼՔ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի անասնաբուծության զարգացում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե - 10.12.10, N ԱԱ/3-4/3036-10	
2. Նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում ուղղել պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը և աշխատանքի նկարագրությունը	2. Կատարված է համապատասխան ճշտում
3. Նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում ուղղել պայմանագրի արժեքը	3. Պայմանագրի արժեքը նշված է ճիշտ, քանի որ կովերի ներմուծումից չի անվերաբերյալ արտոնություններ ստանալ

18/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

դեկտեմբերի 2010 թվականի N Մ - - Ա քաղ. երևան

18/3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8/-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի -ի N-10, Հայաստանի Հանրապետության աշխարհների և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի նոյեմբերի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3/-10 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911) իրականացվող՝ շուրջ 240 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Ամանորյա նվերներ հայ երեխաներին» ծրագիրը (կցվում է):
2. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.
 - 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:
3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Շ Է
«Հայաստանի մանկական ասոցիացիա» ԲԴԿ-ի
նախագահ Կարոյան Սերոբյանի կողմից
«19» հոկտեմբերի 2010 թ.

« Ա մ ա ն ո թ ի ն վ ե թ ն ք հ ա յ ե թ ե խ ա ն ն ի ն »
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Գերմանիայի «Ֆրիդենսդախ» ինտերնացիոնալ հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է Հայաստանի հաշմանդամ, հիվանդ և ծնողազուրկ երեխաներին ամանորյա նվերների բաշխումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուրբերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններին:
3.	Բարեգործը	«Ֆրիդենսդախ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Գերմանիա, Օբեռհալցեն, Լամոնտշթրասե 21, Դիլմոլակեն:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը /ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911/, Գերմանիայի «Ֆրիդենսդախ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության հետ համատեղ:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի հանրապետությունում՝ սոցիալական բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագիրը ֆինանսավորում է գերմանիայի «Ֆրիդենսդախ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպությունը: Ծրագրի բյուջեն կազմում է տարեկան 120000 եվրո և 5 տարվա համար 600000 եվրո, որը ծախսվում է օդային տրանսպորտով օգնությունը Հայաստան տեղափոխման համար:
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 51,

